ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 452-Ա

26 օգոստոսի 2024 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ N 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԱՐԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՄԿՐՏԻՉ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշենի N 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին փոխարինող Մկրտիչ Հակոբյանի 2024 թվականի օգոստոսի 23-ի Մ-14739-2024 գրությունը, ինչպես նաև «Շենգավիթ բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրամադրված N ZZ 201699 անաշխատունակության թերթիկը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշենի N 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մարինե Ավետիսյանին 2024 թվականի օգոստոսի 12-ից 2024 թվականի օգոստոսի 26-ը ներառյալ համարել ժամանակավոր անաշխատունակության մեջ:

2. Մարինե Ավետիսյանին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2024 թվականի հուլիսի 10-ի N 362-Ա որոշմամբ տրամադրված ամենամյա երկարացված արձակուրդը երկարաձգել անաշխատունակության մեջ գտնվելու համապատասխան օրերի քանակով:

3. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշենի N 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մարինե Ավետիսյանի անաշխատունակության մեջ գտնվելու ժամանակահատվածում տնօրենի լիազորությունների և պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության լաբորանտ Մկրտիչ Հակոբյանին:

4. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2024 թվականի օգոստոսի 12-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

26.08.2024

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք. Գավառ